**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

## ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

**Ն -05**

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում

28 օգոստոսի 2019թ.
№ Ն-05 (Н-05) 2019

Ուժի մեջ է մինչև հավատարմագրման տեխնիկական
կոմիտեի կողմից հետագա հավատարմագրման
կամ հավատարմագրումը մերժելու մասին
համապատասխան որոշման ընդունումը

Սույն վկայականը հավաստում է, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Լաբորատոր փորձարկման կենտրոն» փորձարկման լաբորատորիան համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» № 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես համապատասխանության գնահատման նշանակված մարմին (ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի օգոստոսի 28-ի № 1015-Ա հրաման):

ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4

Էլ. Հասցե: sarm@sarm.am; Հեռ./ֆաքս: (+374 10) 28-56-20

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Լաբորատոր փորձարկման կենտրոն» փորձարկման լաբորատորիայի նշանակման ոլորտը ներառում է արտադրանքի այն տեսակները, որոնց վրա տարածվում են ստորև ներկայացված ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը՝

**Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգեր**

1. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1647-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3208» և «3209» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք)
2. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1795-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3402» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք)
3. ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի «Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 679-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3924» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք)
4. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1546-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «4818» և «9619 00»ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք)

**Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգեր**

1. «Փաթեթվածքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 005/2011)
2. «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 007/2011)
3. «Խաղալիքների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 008/2011)
4. «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 009/2011)
5. «Հացահատիկի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 015/2011)
6. «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 021/2011)
7. «Մրգերից և բանջարեղենից պատրաստված հյութերի արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011)
8. «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011)
9. «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 029/2012)
10. «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 033/2013)
11. «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 034/2013)
12. «Փաթեթավորված խմելու ջրի, ներառյալ բնական հանքային ջրի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 044/2017)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Կ.Տ.

(ստորագրությունը)